ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«13» 03 2024թ.

N 0120

Հասցե ՀՀ, ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 2/42
Հեռ. (+374322) 2-02-86
Էլ. Փոստ: vanmedcenter@gmail.com
Հարկային կոդ՝ 06945592

«ԱԳԱՍՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին/

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունվարի 15-ին կնքված ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5-2 ծածկագրով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ համաձայն՝ 30.01.2024 թվականին տրված պատվերը՝ 127 չափաբաժին՝ Ֆամոտիդին դեղափոշի լիոֆիլիզացված ներարկման լուծույթ 20 մգ/5մլ-2000 ֆլ. «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության կողմից չի մատակարարվել:

21.02.2024 թվականի N 0094 գրությամբ առաջարկվել է վերը նշված ապրանքը մատակարարել 5/հինգ/ օրացուցային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը, վերոնշյալ գրությամբ սահմանված և պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունելի ժամկետում չի մատակարարել դեղորայքը, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը 127 չափաբաժնի՝ Ֆամոտիդին դեղափոշի լիոֆիլիզացված ներարկման լուծույթ 20 մգ/5մլ մասով:

Տեղեկացնում ենք նաև, որ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության 1150004484110100 հաշվեհամարին ենթակա է գանձման 273000 (երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 409500 (չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024 թ. մարտի 27-ը ներառյալ Ձեր կողմից վերը նշված 273000 (երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ՝

պայմանագրի կատարման ապահովման և 409500 (չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարը վճարելու դեպքում «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել վերը նշված հաշվեհամարին և վճարման կտրոնների բնօրինակները մինչև 2024 թ. մարտի 27-ը ներառյալ ներկայացնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն:

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ՝ Վ.Ս.ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Հ.Անդրեասյան